

Ս Ի Ո Ն

ԺԹ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1945

ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ

1-2

Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Արժի անհուն բերկրանով ընդունած ենք Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգընթիր Տեղակալ Ամենապատիւ Տ. Գեորգ Արքեպիսկոպոս Ձեռնդրեալի տօնով սուրբ Յովնուար 18 թուական հեռագիրը, որով կը հաղորդէր մեզի թէ 1945 ի գարնան Ա. Էջմիածնի մէջ պիտի գումարուի Ազգային Եկեղեցական Ժողովը, ընտրելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ահա պատգամը սոյն հեռագրին. «1945 ի գարնան Էջմիածնի մէջ պիտի գումարուի Ազգային Եկեղեցական Ժողովը: Ժողովի բացման նիստ թուականը պիտի հեռագրուի Ձեզի յետոյ: Ձեռնարկեցէ՛ք անմիջապէս Եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորներու ընտրութեանց, թուով ըստ 1941 ին Ձեզ դրկուած Կանոնագրի նախատեսութեան: Հաղորդեցէ՛ք մեզի բոլոր եպիսկոպոսներու եւ ընտրեալ աշխարհական եւ կղերական պատգամաւորներու հասցէները, անուն, հօր անուն եւ ազգանունները եւ ծննդեան թուականը, վիզէներու ստացման եւ առաքման համար: Ժողովի Օրակարգը եւ ուրիշ պատգամական թուղթեր պիտի դրկուին ձեզի թղթասարով»:

Վստահ ենք որ այս ստեղծութիւնը հաղորդագրութիւնը բովանդակէ Հայութեան սիրտն ու հոգին պիտի լեցնէ խորունկ յարգանքի եւ երախտագիտական զգացումներով հանդէպ Հայաստանի Կառավարութեան ու Անոր իմաստուն ղեկավարներուն, որոնք միշտ ազնիւ եւ բարեացակամ վերաբերմունք ունեցած են Հայաստանեայց Եկեղեցւոյ նկատմամբ, ինչ որ բարձրօրէն գնահատուած է եւ պիտի գնահատուի Հայ հաւատացեալներու կողմէ ամենուրեք: Նաեւ հանդէպ Ամենապատիւ Ազգընթիր Տեղակալին, որ իբրեւ գործադուր Հայր իր ձեռքը այսպէս կ'երկնցնէ Հայաստանեայց Քրիստոսապիւր Հայրապետական Դահլէ՛ն վերցնելու սեւ փողը, եւ մի նոր հոգեպարար ցնծութիւն պարգեւելու իր հաւատարմութեամբ զաւակներուն, որոնք ջերմեռանդ զգացումներով եւ հիասթափ աշխատելով Մայր Հայրենիքին ուղղած են իրենց սիրտն ու նայածքը:

Գոհութիւն Հօրն Ամենակալին որ կը հանձնէ իր փոքրիկ հօսին իսկ այս հոգեւոր միութեամբ:

Մեզի կը մնայ աղօթել եւ հայցել որ, Ան, իր Սուրբ Հոգւոյն հովանաւորութիւնն ու առաջնորդութիւնը պարգեւէ գումարուելիք Ազգային Եկեղեցական Ժողովին, որպէսզի Հայրապետական ընտրութեան նուիրական աշխատանքները բարեյաջող արդիւնաւորութեամբ պատկուին, եւ Հայաստանեայց Եկեղեցին ունենայ զինքն արժանաւորապէս մարմնացնող իր Առաքելաւորի Դահլէակալը:

156-98

19356աճ